

Հաստատված է
ՀՀ բանկերի միության խորհրդի
մարտի 2013թ. ապրիլի 17 որոշմամբ
Կազմված է 5 քերթից
Տպագրված է 2 օրինակ
Օրինակ N 2

ՀՔՄ նախագահ՝ -----Ա. Օսիպյան

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Բ Ա Ն Կ Ե Ր Ի Մ Ի Ո Ւ Թ Յ Ա Ն

«Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն Ա Ր Բ Ի Տ Ր Ա Ժ»

Հ Ի Մ Ն Ա Ր Կ Ի

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
(Նոր խմբագրությամբ)

ք. Երևան-2013թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի բանկերի միության (այսուհետ՝ ՀԲՄ) «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկը (այսուհետ՝ Ֆինանսական արբիտրաժային դատարան), ՀԲՄ կողմից ստեղծված, մշտապես գործող Արբիտրաժային դատարան է՝ հիմնարկի կարգավիճակով:

1.2. Ֆինանսական արբիտրաժային դատարանն իր գործունեությունն իրականացնում է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ՀՀ այլ օրենքների և իրավական ակտերի, սույն կանոնադրության, ՀԲՄ խորհրդի կողմից հաստատվող կանոնակարգերի հիման վրա:

1.3 Ֆինանսական արբիտրաժային դատարանն իրավաբանական անձ չէ:

1.4 Ֆինանսական արբիտրաժային դատարանի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Հայաստանի բանկերի միության Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկ,

հայերեն կրճատ՝ «ՀԲՄ Ֆինանսական արբիտրաժային դատարան»

ռուսերեն լրիվ՝ Финансовый арбитраж Союза банков Армении

ռուսերեն կրճատ՝ Финансовый арбитражный суд СБА

անգլերեն լրիվ՝ Financial Arbitrage of Union of Banks of Armenia

անգլերեն կրճատ՝ Financial Arbitration Court of UBA

1.5. Ֆինանսական արբիտրաժային դատարանն ունի իր հայերեն անվանմամբ կլոր կնիք: Ֆինանսական արբիտրաժային դատարանը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.6 Ֆինանսական արբիտրաժային դատարանի գտնվելու վայրն է՝

ք. Երևան, Կորյունի 19 Ա:

1.7. Ֆինանսական արբիտրաժային դատարանը ստեղծված է համարվում ՀԲՄ խորհրդի կողմից սույն կանոնադրության հաստատման պահից և ենթակա է հաշվառման օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱՉԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ֆինանսական արբիտրաժային դատարանի իրավասությանը ենթակա են առևտրային հարաբերություններից բխող այն վեճերը, որոնց լուծումը կողմերը վերապահել են ֆինանսական արբիտրաժային դատարանին (ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին)՝ այդ մասին կնքելով արբիտրաժային համաձայնություն:

2.2. Կողմերի արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում Ֆինանսական արբիտրաժային դատարանն ղիմելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերը, իրավաբանական անձիք, օտարերկրյա քաղաքացիները (քաղաքացիություն չունեցող անձիք) և իրավաբանական անձիք:

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. ՀՀ ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեությունը հիմնվում է օրինականության, արբիտրաժային տրիբունալի անկախության, օրենքի և արբիտրաժային տրիբունալի առջև քաղաքացիների, իրավաբանական անձանց հավասարության, կողմերի մրցակցության և իրավահավասարության, վեճերի օբյեկտիվ, բազմակողմանի, անկողմնակալ, արագ և պրոֆեսիոնալ քննության սկզբունքների վրա:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՒՅԸԸ ԵՎ ԴՐԱ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ֆինանսական արբիտրաժային դատարանը ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ՀՀ կողմից կնքված և վավերացված միջազգային պայմանագրերով (համաձայնագրերով), սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված խնդիրների լուծման համար տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն ամրակցված գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները:

4.2. Ֆինանսական արբիտրաժային դատարանի ֆինանսական միջոցներն ու գույքն օգտագործվում և տնօրինվում են ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահի կարգադրությամբ՝ ՀԲՄ-խորհրդի կողմից հաստատված ծախսերի նախահաշվի շրջանակներում:

4.3. Ֆինանսական արբիտրաժային դատարանի գույքը ձևավորվում է ՀԲՄ-ի կողմից վերջինիս կանոնադրությամբ սահմանված կարգով ֆինանսական արբիտրաժային դատարանին ամրացված գույքից և գումարներից, արբիտրաժային վճարներից, ֆինանսական արբիտրաժային դատարանին հատկացվող այլ գումարներից, ինչպես նաև օրենսդրությամբ չարգելված այլ եղանակներով ձեռք բերվող միջոցներից:

4.4. Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով Ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեությունից առաջացած դրամական միջոցներն առաջնահերթության կարգով ուղղվում են արբիտրների հոնորարների, վարչական ծախսերի և Ֆինանսական արբիտրաժային դատարանի անխափան գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ այլ ծախսերի վճարմանը: Մնացած գումարներն ուղղվում են Ֆինանսական արբիտրաժային դատարանի կամ ՀԲՄ կանոնադրական խնդիրների իրագործմանը:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1. Ֆինանսական արբիտրաժային դատարանն ունի նախագահ և արբիտրներ:

5.2. Ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահը, որը համարվում է նաև արբիտր, նշանակվում է ՀԲՄ խորհրդի կողմից՝ հինգ տարի ժամկետով:

5.3. ՀԲՄ խորհուրդը հաստատում է արբիտրների անվանացուցակը, որից վիճող կողմերը կարող են ընտրել արբիտրներ:

5.4.Ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրներ կարող են լինել դիպլոմավորված կամ մագիստրոսի կոչումով բարձրագույն իրավաբանական կրթություն, ֆինանսաբանկային համակարգի առնվազն երեք տարվա ընդհանուր աշխատանքային կամ իրավաբանական խորհրդատվության փորձ և դատաիրավական գործունեության փաստացի փորձ ունեցող անձինք: ՀԲՄ խորհուրդ կարող է սահմանել ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրների ընտրության այլ չափանիշներ և ընթացակարգեր:

5.5. Ֆինանսական արբիտրաժային դատարանն ունի իր աշխատակազմը, որի կառուցվածքը և հաստիքացուցակը ֆինանսական արբիտրաժի նախագահի ներկայացմամբ հաստատում է ՀԲՄ խորհուրդը:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1.Ֆինանսական արբիտրաժային դատարանի ընդհանուր կառավարումը, որպես հիմնադիր, իրականացնում է ՀԲՄ-Ն՝ օրենքներով, իր և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

6.2. Ֆինանսական արբիտրաժային դատարանի կառավարմանը վերաբերող բոլոր իրավասությունները ՀԲՄ անունից իրականացնում են ՀԲՄ խորհուրդը կամ ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարը՝ համաձայն ՀԲՄ-ի և սույն կանոնադրության:

6.3. ՀԲՄ խորհրդի իրավասության հարցերն են.

6.3.1 Ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը,

6.3.2. Ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնակարգի, դրա փոփոխությունների հաստատումը,

6.3.3. Ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահի նշանակումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության չափի որոշումը,

6.3.4. Ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրների կազմը՝ անվանացուցակը հաստատելը, դրանում փոփոխություններ կատարելը, արբիտրների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

6.3.5. Ֆինանսական արբիտրաժային դատարանի վարչակազմակերպական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատումը,

6.3.6. Ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեության դադարեցումը,

6.3.7. Ֆինանսական արբիտրաժային դատարանի ծախսերի նախահաշվի, ինչպես նաև դրա կատարողականի հաստատումը:

6.3.8. Ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեության վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների հաստատումը:

6.3.9. Ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեության հետ կապված՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ ՀԲՄ խորհրդին վերապահված այլ լիազորությունների իրականացումը:

6.4 ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարի իրավասության հարցերն են .

6.4.1. Ֆինանսական արբիտրաժային դատարանին ամրացվող գույքի կազմը և չափը որոշելը,

6.4.2. ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և Ֆինանսական արբիտրաժի Կանոնակարգով ՀԲՄ գործադիր մարմնի ղեկավարին վերապահված այլ լիազորությունների իրականացումը:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահը՝

7.1.1. ղեկավարում և կառավարում է ֆինանսական արբիտրաժային դատարանի ընթացիկ գործունեությունը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ՀԲՄ-ի իրավասությանը.

7.1.2. կազմակերպում է ֆինանսական արբիտրաժային դատարանի և աշխատակազմի գործունեությունը.

7.1.3. առանց լիազորագրի ներկայացնում է ֆինանսական արբիտրաժային դատարանը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

7.1.4. իրականացնում է ֆինանսական արբիտրաժային դատարանի արբիտրներից վերապահված բոլոր լիազորությունները.

7.1.5. կազմակերպում է արբիտրաժային դատավարության պրակտիկայի ուսումնասիրումը և ամփոփումը, ֆինանսական արբիտրաժային դատարանում քննված գործերի վիճակագրության վարումը.

7.1.6. տնօրինում է Ֆինանսական արբիտրաժային դատարանի գույքը և ֆինանսական միջոցները՝ սույն կանոնադրության 4.2 կետով սահմանված կարգով.

7.1.7. ապահովում է ֆինանսական արբիտրաժային դատարանի բնականոն գործունեության կազմակերպումը.

7.1.8. ՀԲՄ խորհրդի հաստատմանն է ներկայացնում ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեության մասին եռամսյակային հաշվետվությունները.

7.1.9. Աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Ֆինանսական արբիտրաժային դատարանի աշխատողներին.

7.1.10. Ֆինանսական արբիտրաժային դատարանի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

7.1.11. իրականացնում է սույն կանոնադրությունից և ֆինանսական արբիտրաժային դատարանի կանոնակարգից բխող այլ լիազորություններ:

7.2 Ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր հակաօրինական գործունեության արդյունքում ՀԲՄ-ին և Ֆինանսական արբիտրաժային դատարանին պատճառված գույքային վնասի համար: Ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահի լիզորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասները հատուցելու պարտավորությունները չկատարելու համար:

7.3. Ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահի տեղակալը կամ արբիտրների անվանացուցակում ընդգրկված արբիտրներից մեկը՝ ՀԲՄ խորհրդի նախագահի հաստատմամբ:

8. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

8.1 Ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեությունը դադարում է օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

8.2 Ֆինանսական արբիտրաժային դատարանի գործունեությունը համարվում է դադարած՝ այդ մասին ՀԲՄ խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից: